Արտատպված է՝ Ի. Ա. Բունին, Վիպակներ և պատմվածքներ, Ե., «Սովետական գրող» հրատարակչություն, 1998. Դորա Եսայանի թարգմանությամբ:

ԲԵՌՆԱՐ[1]

Ինձ քիչ է մնացել ապրելու այս աշխարհում:

Եվ ահա միտքս է գալիս այն, ինչ մի ժամանակ գրի էի առել Բեռնարի մասին ծովամերձ Ալպերում, Անտիբի մոտերքը:

— Պինդ քնած էի, երբ Բեռնարը մի բուռ ավազ նետեց պատուհանիս…

Այսպես է սկսվում Մոպասանի «Ջրի վրան», այդպես էր արթնացրել նրան Բեռնարը «Բել Ամիի» Անտիբյան նավահանգստից դուրս գալուց առաջ 1888 թվականի ապրիլի 6-ին:

— Բացեցի պատուհանս և երեսիս, կրծքիս փչեց, հոգուս մեջ թափանցեց գիշերվա սքանչելի զովը: Երկնքի թափանցիկ կապույտը թպրտում էր աստղերի կենդանի փայլից. . .

— Լավ եղանակ է, պարոն:

— Իսկ քամի՞ն:

— Ափից է, պարոն:

Կես ժամից նրանք արդեն ծովում են.

— Հորիզոնը գունատվում էր, հեռվում, Հրեշտակների ծովախորշի ետևում երևում էին Նիցցայի լույսերը, ավելի հեռվում՝ Վիլֆրանշի պտտվող փարոսը. . . Լեռներից, դեռ անտեսանելի,— զգացվում էր միայն, որ ծածկված են ձյունով,— երբեմն մեզ էր հասնում չոր ու սառը շունչ. . .

— Հենց որ դուրս եկանք նավահանգստից, զբոսանավը կենդանացավ, դարձավ ուրախ, արագացրեց ընթացքը, թռչկոտաց մանրիկ ալեծածանքի վրա. . . Օրը բացվեց, աստղերը մարում էին. . . Հեռավոր երկնքում, Նիցցայի վրա, մի առանձնահատուկ վարդագույն լույսով հուրհրատեցին Վերին Ալպերի ձյունե կատարները. . .

— Ղեկը տվեցի Բեռնարին, որպեսզի վայելեմ արևածագը:

Սաստկացող քամին քշում էր մեզ երերվող ալիքների վրայով, լսում էի հեռավոր ղողանջ. ինչ-որ տեղ ղողանջում էին զանգերը, հնչում էր Angelus-ը: Ինչպես եմ սիրում ես այդ վաղորդյան ժամը, երբ մարդիկ դեռ քնած են, իսկ երկիրն արդեն արթնանում է: Շնչում ես, ներծծում, տեսնում աշխարհի նոր ծնվող երկրային կյանքը, կյանք՝ գաղտնիքը, որը հավերժական ու մեծ տառապանքն է մեր. . .

— Բեռնարը նիհար է, ճարպիկ, մաքրության և կարգուկանոնի զարմանալի սիրահար, հոգատար է և աչալուրջ: Նա բացսիրտ և հավատարիմ մարդ է, հիանալի ծովային. . .

Այդպես է ասում Բեռնարի մասին Մոպասանը: Իսկ Բեռնարն ինքը իր մասին ասում է հետևյալը.

— Կարծում եմ, որ ես լավ ծովային եմ եղել: Je crois bien que j’étais un bon marin.

Նա այդ ասել է մահանալիս, դա նրա վերջին բառերն են եղել մահվան մահճում այն նույն Անտիբում, որտեղից նա «Բել Ամիով» ճամփորդության դուրս եկավ 1888 թվականի ապրիլի 6-ին:

Այն մարդը, որ տեսել էր Բեռնարին մահից քիչ առաջ, պատմում է.

---

[1] Գի դը Մոպասանի «Ջրի վրա» ակնարկաշարի հերոսը: Այդ ակնարկաշարից բերված ազատ և կրճատ մեջբերումներից և կազմված Բունինի այս ստեղծագործությունը (ծթ.):

— Երկար տարիներ Բեռնարը ծովային թափառական կյանք էր վարում մեծ բանաստեղծի հետ, չբաժանվեց նրանից ընդհուպ մինչև նրա ճակատագրական մեկնումը բժիշկ Բլանշի մոտ, Փարիզ:

— Բեռնարը մահացավ իր Անտիբում: Բայց դեռ վերջերս տեսա նրան Անտիբի փոքրիկ նավահանգստի արևով ողողված առափնյակում, որտեղ այնքան հաճախ կանգնած էր լինում «Բել Ամին»:

Բարձրահասակ, չոր-չոր եռանդուն և ծովի աղից կոպտացած դեմքով, Բեռնարը շատ չէր սիրում խոսքի բռնվել: Բայց բավական էր խոսք բացվեր Մոպասանի մասին, նրա երկնագույն աչքերը վայրկենապես կենդանանում էին, ու պետք էր լսել, թե ինչպես էր խոսում նրա մասին:

— Հիմա նա լռեց առհավետ: Նրա վերջին բառերն էին. «Կարծում եմ, որ ես լավ ծովային եմ եղել»:

Ես պարզ պատկերացնում եմ, թե նա ինչպես է ասել այդ բառերը: Նա ասել է հաստատորեն, հպարտությամբ, խաչակնքելով սև, ծերությունից չորացած ձեռքով.

— Je crois bien que jétais unbon marin.

Իսկ ի՞նչ է ուզեցել արտահայտել այդ բառերով: Ուրախություն այն մտքից, որ ինքը աշխարհում ապրելով ու լինելով լավ ծովային, օգո՞ւտ է բերել իր մերձավորին: Ոչ, այն, որ աստված մեզնից յուրաքանչյուրի կյանքի հետ տալիս է այս կամ այն շնորհքը և նրա վրա սրբազան պարտք է դնում այդ շնորհքը հողի մեջ չթաղել: Ինչո՞ւ, ինչի՞ համար: Մենք այդ չգիտենք: Բայց մենք պետք է գիտենանք, որ ամեն ինչ՝ մեզ համար անիմանալի այս աշխարհում, պետք է անպայմանորեն ունենա ինչ-որ իմաստ, ինչ-որ բարձր աստվածային կանխամտածվածություն, ուղղված այն բանին, որ ամեն ինչ լինի լավ այս աշխարհում և որ աստվածային այդ կամքի ջերմեռանդ կատարումը միշտ մեր ծառայությունն է նրան, ուրեմն և՝ ուրախություն է, հպարտություն: Եվ Բեռնարը գիտեր այդ, զգում էր այդ: Նա ամբողջ կյանքում եռանդուն, արժանավոր կերպով, հավատարմորեն կատարում էր աստծու կողմից իր վրա դրված համեստ պարտականությունը, ծառայում նրան խղճի մտոք: Եվ ինչպե՞ս կարող էր նա չասել այն, ինչ ասել էր իր վերջին պահին. «Այսօր թողություն ես տալիս մեղքերիս, տեր իմ, ծառայի քո, ու ես ահա համարձակվում եմ ասել քեզ և մարդկանց, կարծում եմ, որ ես լավ ծովային եմ եղել»:

— Ծովում ամեն ինչ անհանգստացնում էր Բեռնարին, գրում է Մոպասանը, և՛ հանկարծակի հանդիպական հոսանքը, որ նշանակում էր, թե ինչ-որ տեղ բաց ծովում քամի է սկսվել, և՛ Էսթերելի վրա իջած ամպերը, որ նշանակում էին միստրալ արևմուտքում. . . Զբոսանավում նա այնպիսի մաքրություն էր պահպանում, որի ջրի մի կաթիլ անգամ չէր հանդուրժում մետաղյա որևէ մասի վրա. . .

Այո, ինչ օգուտ կարող էր լինել մերձավորին այն բանից,

որ Բեռնարը անմիջապես մաքրում էր այդ կաթիլը: Բայց նա մաքրում էր: Ինչո՞ւ: Ինչի՞ համար:

Բայց չէ որ աստված ինքը սիրում է, որ ամեն ինչ «լավ» լինի: Նա ինքը ուրախանում էր, տեսնելով, որ իր արարածները «միանգամայն լավն են»:

Ինձ թվում է, որ ես էլ, որպես արվեստագետ, վաստակել եմ իրավունք, վերջին իմ այս օրերին ասելու իմ մասին նման մի բան, ինչ ասել է Բեռնարը մահանալիս:

1952